Իսկ Սուրախանի կոչուած տեղումն բղխում է միայն սպիտակ նաւթ։

Որոց տարեկան ստացած, և վաճառած նաւթի հաշիւը Մուրճ ամսագիրը այսպէս է ցուցակագրում՝

(1891. նոյեմբ. № 11։ յերես 1364 - 1376)։

«Սկզբում մեր դարու մէջերքում նաւթային գործը ոչ մի կարեւորութիւն չէր ներկայացնում, նախ որ կառավարութիւնը մոնոպոլ (մենավաճառութիւն) ստեղծելով թուլացնում էր գործարանական ջանքերը, և երկրորդ՝ հաղորդակցութեան ճանապարհներ չկային, որովհետեւ քարվանները միայն փոքր քանակութեամբ էին փոխադրում Բագուից Վլատիկաւկազ։ Նաւթը սակաւ էր և թանգ, և Ռուսաստանում Տրանսիլուանիայի (Ամերիկական) կիրոսինն էր գործածւում։ Կամաց կամաց գործիքները կատարելագործեցին, արդիւնաբերութիւնը աճեց և այժմեայ բարգաւաճման առաջին հիմունքները տուեցին 1872 թուականի հրամանով, որը վերացրեց մոնոպոլը։ Երկրորդ շրջանում (1872—1877) տէրութիւնը վերապահեց մարկայի իրաւունքը, իսկ 1877ին այդ էլ վերացրեց, բայց աւելցրեց մաքսը։

Ա.հա՛ իբրեւ դոկումէնտ Ապշերոնից արտահանուած հում կամ զտած նաւթի քանակութիւնը 1840ից մինչեւ 1871 թուականը.

Մոնոպոլի ժամանակ			Մոնոպոլը վերացնելուց յետոյ			Դանոթ.
	հում նաւթ			հում նաւթ	զտուած նաւթ	
1840	3,500	թոն	1872		16,400	
1845	3,500	,,	1873	65,000 թոն	,,	Մի թոնը հաշուած է 60 պուդ։
1847	3,400	,,	1876	195 000 ,,	55,000	
1850	3,500	,,	1880	400,000 ,,	150,000	
1860	5,000	,,	1883	800,000 ,,	206,000	
1865	8,000	,,	1888	2,500,000 ,,	800,000	
1870	27,000	,,	1889	2 780,000 ,,	900,000	
1871	24,000	,,	1890	3,000,000 ,,	1,000,000	